

Վիճակագրական արտադրանք – Գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գների ինդեքս (ամսական) և Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքս (ամսական)

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<i>Կարիքների ձևակերպում</i>		
	1.1 Կարիքների բացահայտում	Ուսումնասիրվում է այլ երկրների փորձը, վիճակագրական հաշվետվական ձևի ցուցանիշները:
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	Տեղեկատվության հավաքման հետ կապված պարզաբանումներ տրամադրելու նպատակով աշխատանքային քննարկումներ են իրականացվել վիճակագրական տեղեկատվություն ներկայացնող համապատասխան ներկայացուցիչների հետ:
	1.3 Արտադրանքի նպատակների սահմանում	Պարբերաբար ուսումնասիրվում է վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կարծիքը՝ կապված Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերի հետ՝ ինչպես առաջարկվող նոր ցուցանիշների ընդգրկման, այնպես էլ առկա ցուցանիշների վերաբերյալ նրանց վերաբերմունքի, ակնկալիքների ու պահանջմունքների բացահայտման նպատակով: Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:
	1.4 Հասկացությունների որոշում	Հիմնական նպատակն է օգտագործողներին տրամադրել արդիական տեղեկատվություն գյուղատնտեսական մթերք արտադրողի գների ինդեքսի և գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսի վերաբերյալ: Գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գների ինդեքսն արտահայտում է գյուղմթերք արտադրողների տարբեր ուղղություններով իրացված մթերքի փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Գյուղատնտեսական արտադրության միջոցների

		<p>գնման գների ինդեքսն արտահայտում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Գների ինդեքսները հաշվարկվում են Պաաշեի բանաձևով՝ գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գների ինդեքսն հիմք ընդունելով տվյալ ամսում իրացված (վաճառված), իսկ գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսն հիմք ընդունելով տվյալ ամսում ձեռք բերված (գնված) քանակները և ծավալները: Միաժամանակ այդ ցուցանիշները անհրաժեշտ են միջին կշռված գների հաշվարկման համար: Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները և գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսները կիրառվում են ազգային հաշիվներում որպես դեֆլատոր, ինչպես նաև գյուղմթերքի արտադրանքի և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ծավալները հաշվարկելու, գյուղատնտեսության վիճակագրության տվյալների բազայի ստեղծման, գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացման վրա ազդող գործոնների և գների դինամիկան ուսումնասիրելու, ինչպես նաև ազրարային քաղաքականությունը կանխորոշելու, պարենային ապահովության ռազմավարության մշակման համար:</p>
	<p>1.5 Տվյալների առկայության ստուգում</p>	<p>Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ընտրանքային դիտարկման՝ հարցաթերթերի միջոցով: Վերջինս ծառայում է վիճակագրական ամփոփ հաշվետվական ձևերով ստացվող ցուցանիշների այլընտրանք:</p> <p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:</p>
	<p>1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում</p>	<p>Գյուղատնտեսության արտադրանքի գների ինդեքսների հաշվարկները կատարվում են միջազգային ստանդարտներին համապատասխան, ինչը հնարավորություն է տալիս գների վիճակագրության ոլորտում համագործակցել միջազգային կազմակերպությունների (FAO, UNDP, IMF, OECD, Eurostat) հետ, ինչպես նաև կատարել համեմատություններ միջազգային գների հետ:</p>

		<p>Վիճակագրական դիտարկումները ներառում են Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (ՏԳՏՀԴ խմբ.2)՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն (բաժին Ա) բաժնի՝ գյուղատնտեսության հատվածը: Ուսումնասիրվում է այլ պետությունների կողմից անցկացվող հետազոտությունների հարցաշարերը:</p>
Նախագծում		
	2.1 Արդյունքների նախագծում	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:</p>
	2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում	<p>Վիճակագրական ցուցանիշների հավաքման համար՝ գյուղատնտեսական մթերք արտադրողի գների ինդեքսի և գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսի վիճակագրական հաշվետվական ձևերը կազմված են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. «Գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացված ծավալների և միջին գների վերաբերյալ (ըստ իրացման ուղիների)» աղյուսակ 3 ընտրանքային հետազոտության հարցաթերթից, որը բացկացած է 2 մասից՝ (բուսաբուծություն և անասնաբուծություն) և հաշվարկվում է 61 ապրանքների համար, որոնք խմբավորվում են 13 ապրանքախմբերում: 2. «Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների վերաբերյալ» աղյուսակ 4 ընտրանքային հետազոտության հարցաթերթից, որը հաշվարկվում է 92 ապրանքների համար, որոնք խմբավորվում են 10 ապրանքախմբերում:
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	<p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է «Գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացված ծավալների և միջին գների վերաբերյալ (ըստ իրացման ուղիների)» աղյուսակ 3 և «Գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների վերաբերյալ» աղյուսակ 4 ընտրանքային հետազոտության հարցաթերթերի միջոցով: Տեղեկատվության հավաքումն</p>

		<p>իրականացվում է վիճակագիրների կողմից, ընտրանքային եղանակով ընտրված գյուղացիական տնտեսությունների հետազոտման միջոցով, ամսական պարբերականությամբ:</p>
	<p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p>	<p>Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է ոլորտի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով:</p> <p>Այդ նպատակով հետազոտման մեջ ընդգրկվել է ՀՀ բոլոր 10 մարզերի 38 տարածաշրջանների գյուղական բնակչության տոկոսային կշիռները, որից որոշվել է յուրաքանչյուր մարզի ընտրված գյուղերի քանակը:</p> <p>Ընտրանքի մեջ ընդգրկված գյուղացիական տնտեսությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով սեփականաշնորհված հողաբաժինների քանակությունները: Ելնելով հետազոտությունից նախագծվել է ընտրանքի չափը, ընտրանքի ձևը, որի հետևանքով իրականացվել է երկաստիճան ընտրանք: Ընտրանքի առաջին փուլում յուրաքանչյուր մարզից ընտրվել է գյուղական բնակավայրեր, որոնց քանակը որոշվել է հաշվի առնելով մարզի գյուղական բնակչության թվաքանակը: Երկրորդ փուլում ընտրվել է դիտարկվող գյուղացիական տնտեսությունները՝ ընտրանքի սիստեմատիկ մեթոդով: Այսպիսով, գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման դաշտում ընդգրկվել է 12090 գյուղացիական տնտեսություններ (186 գյուղական բնակավայր, յուրաքանչյուր գյուղում 40-ական գյուղացիական տնտեսություն):</p> <p>Ապրանքների ցանկը քննարկվել և որոշվել է Արմատատի գների վիճակագրության և միջազգային բաժնի կողմից՝ խորհրդակցելով մարզային վիճակագրական վարչությունների հետ, հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունների կողմից մշակվող առավել ներկայացուցչական արտադրատեսակները:</p>
	<p>2.5 Մշակման և վերլուծության նախագծում</p>	<p>Տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների: Ստուգման արդյունքում ի հայտ եկած սխալները ճշտվում են համապատասխան մարզային վարչությունների աշխատակիցների անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան վիճակագիրների կամ անմիջապես տնային տնտեսությունների հետ:</p>
	<p>2.6 Արտադրության</p>	<p>Տեղեկատվության հավաքումից մինչև դրա</p>

	<p>համակարգերի և գործընթացի նախագծում</p>	<p>հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված ռեսպոնդենտներին համապատասխան իրազեկումներով ապահովելու (բոլոր վիճակագիրներին տրամադրվում են հրահանգ), աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների, սեմինարների միջոցով վերապատրաստելու (կազմակերպվում է համապատասխան հրահանգավորում) և այլնի հետ:</p>
<p><i>Կառուցում</i></p>		
	<p>3.1 Հավաքման գործիքի կառուցում</p>	<p>Տեղեկատվության հավաքման իրականացման և դրա համար անհրաժեշտ վիճակագրական հաշվետվական և ամփոփ հաշվետվական ձևերի և հարցաթերթերի, դրանց լրացման հրահանգների հասանելիության ապահովման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցներ:</p>
	<p>3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում</p>	<p>Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային փաթեթում (Microsoft Office Access) առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ՝ հանրագումարների, տրամաբանական կապերի, մարզի և բնակավայրի կոդերի համապատասխանության և այլ ավտոմատ ստուգումների համակարգեր:</p>
	<p>3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում</p>	<p>Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի:</p>
	<p>3.4 Գործընթացների կարգավորում</p>	<p>Վիճակագրական արտադրանքի ստացումը իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝</p> <ol style="list-style-type: none"> 1. տեղեկատվության հավաքում (ամսվա ընթացքում 3 անգամ վիճակագիրը գյուղացիական տնտեսություն այցելելու միջոցով): <p>Այցելության ընթացքում վիճակագիրը գրանցում է իրացված գյուղատնտեսական արտադրանքի քանակի, միջին գնի և ընդհանուր գումարի (ծավալի) մասին ցուցանիշներ գյուղատնտեսական մթերքի</p>

		<p>ըստ իրացման երեք ուղիների (մթերող կազմակերպություններին, անհատ քաղաքացիներին և շուկայում) և գնված գյուղատնտեսական արտադրության միջոցների քանակի, միջին գնի և ընդհանուր գումարի(ծավալի) մասին ցուցանիշներ,</p> <p>2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ,</p> <p>3. տեղեկատվության մուտքագրում և ստուգաճշտում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով (Microsoft Office Access ծրագրային փաթեթ),</p> <p>4. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ, կրկնակի թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ,</p> <p>5. տեղեկատվության տարածում՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով տարեգրքերում, տեղեկատվական զեկույցներում, վիճակագրական ժողովածուներում, ինչպես նաև տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում պաշտոնական պատասխան գրությունների միջոցով:</p>
	<p>3.5 Արտադրության համակարգի փորձարկում</p>	<p>Պայմանավորված վիճակագրական հաշվետվական ձևում ցուցանիշների փոփոխությունների հետ մուտքագրման ծրագրային փաթեթը պարբերաբար ենթարկվում է համապատասխան փոփոխությունների:</p>
	<p>3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում</p>	<p>Ցուցանիշի հետազոտության հարցաթերթում իրականացվում է ցուցանիշի տրամադրման հնարավորությունները, ինչպես նաև փորձարկելու դրա նկատմամբ նրանց ընկալումը :</p>
	<p>3.7 Արտադրության համակարգի վերջնականացում</p>	<p>Իրականացվում է հարցաթերթերում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների կազմում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողներին (տնային տնտեսություններին):</p>
<p>Հավաքում</p>		
	<p>4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում</p>	<p>Գյուղմթերքի իրացման գների ինդեքսների և գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսների հաշվարկման ընթացքում տեղեկատվության հավաքման համատարած դիտարկման արդյունքում ձևավորվում է</p>

		տեղեկատվության գլխավոր համակցությունը, որն իր մեջ ներառում է մասնավոր տնային տնտեսություններից հավաքված վիճակագրական տեղեկատվությունը:
	4.2 Հավաքման կազմակերպում	Վիճակագրական տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա տնային տնտեսությունների քանակին համապատասխան հարցաթերթերի և ըստ անհրաժեշտության դրա լրացման հրահանգի տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն և բաշխում համապատասխան վիճակագրերին: Միաժամանակ հարցաթերթի մասին հասանելի է նաև Արմստատի պաշտոնական կայքում: Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցներն ունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ վիճակագրական տեղեկատվության հավաքման գործընթացի կազմակերպման համար: Առկա են էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների հավաքման համար անհրաժեշտ ցանցային միջոցներ:
	4.3 Հավաքման իրականացում	Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ինչպես Արմստատի տարածքային ստորաբաժանումների, մարզային վարչությունների, այնպես էլ Արմստատի կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման միջոցով:
	4.4 Հավաքման վերջնականացում	Հավաքված տեղեկատվությունը թվաբանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո կրկնակի (տարբեր մուտքագրող վիճակագիրների կողմից) մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է մեխանիկական մուտքագրման եղանակով:
	<i>Մշակում</i>	
	5.1 Տվյալների ինտեգրում	Իրականացվում է Արմստատի մարզային վարչություններից ստացվող համապատասխան տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում:
	5.2 Դասակարգում և կողավորում	Բոլոր գյուղացիական տնտեսությունները կողավորվում են 6-անիշ համակարգով, որից՝ առաջին երկու նիշերը համապատասխան մարզերի ծածկագրերն են, հաջորդ երկու նիշը գյուղի ծածկագիրն է, իսկ վերջին երկու նիշը՝ գյուղացիական տնտեսության: Հետագա

		հաշվարկների մեջ բոլոր գյուղացիական տնտեսությունները հանդես են գալիս այդ կողերով, ինչն էլ ապահովում է նրանց կողմից հաղորդած տվյալների գաղտնիությունը: Կողավորումն իրականացվում է համաձայն նախապես սահմանված կարգի:
	5.3 Վերանայում և հաստատում	Իրականացվում է թերի, ոչ տրամաբանական կամ աղավաղումներով ներկայացված գնային տեղեկատվության ստուգաճշտում, ինչպես նաև ոչ ճիշտ կողավորված տեղեկատվության համապատասխանեցում նախապես հաստատված Արմստատի կողմից պահանջներին:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Իրականացվում է բացակայող արտադրատեսակի տեղեկատվության համալրում ցուցանիշների նախորդ ժամանակահատվածի վերաբերյալ ներկայացված տվյալներով:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Առկա են գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար:
	5.6 Կշիռների հաշվարկում	Քանգի գյուղմթերքի իրացման գների ինդեքսների հաշվարկման ժամանակ ներառվում են ՀՀ բոլոր մարզերից հավաքված տեղեկատվությունը, որն ապահովում է ոլորտի վիճակագրության ամբողջականությունը, ուստի լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ ելքային տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով. <ul style="list-style-type: none"> • հաշվետու ամիսը նախորդ ամսվա նկատմամբ, • հաշվետու ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, • հաշվետու ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, • աճողական կարգով (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ):
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Վիճակագրական տվյալների ստացման ցուցանիշների հաշվարկներից հետո տեղեկատվությունը լինում է վերջնական և չի ենթարկվում ճշգրտման:
	<i>Վերլուծություն</i>	
	6.1 Նախնական	Ստացված ամփոփ տեղեկատվության հիման վրա իրականացվում է վիճակագրական ցուցանիշների

<p>արդյունքների նախապատրաստում</p>	<p>խմբավորումների, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում: Մասնավորապես հաշվարկվում են գյուղմթերքի իրացման գների ինդեքսի 61 հիմնական ցուցանիշները 13 ապրանքախմբերով՝ հացահատիկային, տեխնիկական, կարտոֆիլ և բանջարաբուստանային, միրգ, պտուղ և հատապտուղ, բոստանային կուլտուրաներ, մեղր, միս (սպանդային քաշով), կաթ և կաթնամթերք, ձու, բուրդ, կաշվեհումք և գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսի 92 հիմնական ցուցանիշները 10 ապրանքախմբերով՝ սերմացուներ և տնկիներ, անասուն, էներգիա և քսայուղեր(վառելիք և էլեկտրաէներգիա, վառելանյութ), պարարտանյութեր, բույսերի պաշտպանության միջոցներ (թունաքիմիկատներ),անասնակեր (համակցված կեր և խոտաբույսեր), գյուղատնտեսական մանր գործիքներ, շինանյութեր, գյուղատնտեսական վճարովի ծառայություններ և մեքենա-սարքավորումների վերանորոգում (ընդհանուր տնտեսական ծախսեր, անասնաբուժական ծառայություն, մեքենա-սարքավորումների ընթացիկ և կապիտալ վերանորոգում, արտադրական շենքերի ընթացիկ և կապիտալ վերանորոգում), մեքենասարքավորումներ և պահեստամասեր: Ստացված ցուցանիշների հաշվարկն օգտագործվում է ըստ գյուղական բնակավայրերի, մարզերի և այլ ամփոփ տեղեկատվության ներկայացման, ինչպես նաև ցուցանիշների դինամիկ շարքերի կառուցման համար:</p>
<p>6.2 Արդյունքների վավերացում</p>	<p>Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն վիճակագրական հարցաթերթի լրացման հրահանգի:</p>
<p>6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում</p>	<p>Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով տնտեսությունում տեղի ունեցող տարաբնույթ երևույթների ազդեցությունը նշված ոլորտի վրա:</p>
<p>6.4 Բացահայտման հսկողության կիրառում</p>	<p>Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց գերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը</p>

		հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ http://www.armstat.am/file/doc/99454478.pdf հղումը):
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումն իրականացվում է գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գների ինդեքսի և գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գների ինդեքսի վերաբերյալ ամփոփ ցուցանիշների վերլուծություն՝ ըստ դրանց դինամիկ շարքերի:
	<i>Տարածում</i>	
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների պատրաստում և վերջնական ճշգրտման աշխատանքներ, ինչպես նաև կատարվում է դինամիկ շարքերի արդիականացում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունն հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի, վիճակագրական ժողովածուների և տեղեկատվական ամսական զեկույցների միջոցով. 1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (ամսական, եռամսյակային) 2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 3. Հայաստանը թվերով (տարեկան) 4. Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում (տարեկան) Տարեգրքերի և հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանել են Արմստատի պաշտոնական կայքում https://www.armstat.am/am/?nid=82 հղումով:
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի:

	7.4 Տարածման արտադրանքների խթանում	Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չհրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
	<i>Գնահատում</i>	
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	-
	8.2 Գնահատման իրականացում	Տեղեկատվության որակի գնահատման համար տեղեկատվական հիմք են հանդիսանում ՀՀ գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտից հավաքվող համապատասխան տեղեկատվությունը:
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	-